23.05.2025

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔ-ՈՒՂԵՐՁԸ «ՎԵՐՋԻՆ ԴԱՍ» ԵՎ «ՎԵՐՋԻՆ ԶԱՆԳ» ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԹԻՎ

Սիրելի շրջանավարտներ,

Շնորհավորում եմ ձեզ ձեր կյանքի կարևորագույն իրադարձության՝ Վերջին զանգի առթիվ: «Վերջին դաս» ու «Վերջին զանգ» ավանդական դարձած հանդիսությունները 2025 թվականի մայիսի 23-րդ օրը, ինչպես ողջ հանրապետությունում, այնպես էլ Սևան համայնքի հանրակրթական հաստատություններում մի հարկի տակ են համախմբել շրջանավարտներին, ուսուցիչներին, ծնողներին, մեծ ու փոքրին:

Սիրելի պատանիներ և աղջիկներ

Տոն դարձած օրը ձերն է, որը մեկտեղել է հուզմունքն ու հիշողությունները, լավագույն ցանկություններն ու բարեմաղթանքները, հրաժեշտի ու «մնաս բարով»-ի խոսքերը:

Օրը ձերն է, օրվա պարգևած հաճելի ու սպասված պահերը ձերն են, որոնք միավորել են դաս ու դասարանի, ընկերության, մանկության ու պատանեկության անկրկնելի տարիներն ու զգացողությունները:

Հետևում եք թողել ձեր կյանքի հետաքրքիր, զգացմունքային, իրադարձություններով հարուստ մի շրջան և գնում եք դեպի նոր կյանք:

Համոզված եմ, որ ուսումնառության ընթացքում կուտակած գիտելիքները ձեզ օգնելու են կողմնորոշվել և վստահորեն առաջ գնալ ձեր երազանքներին՝ անկախ դժվարություններից ու մարտահրավերներից:

Գնահատեք այն, ինչ ունեք, ինչը ձեռք եք բերել ձեր հարազատ կրթօջախում՝ երազանքը դարձնելով նպատակ, իսկ նպատակը՝ հնարավորություն:

Սիրելի շրջանավարտներ

Դուք դառնալու եք մեր սպասված հաղթանակների, հաջողությունների ու ձեռքբերումների արարողն ու կրողը: Կյանքում ինչ էլ որ անեք, արեք սիրով ու նվիրումով, պարտքի մեծ զգացումով և պատասխանատվությամբ:

Ձեզանից շատերը շուտով կհամալրեն նաև Հայոց բանակի շարքերը: Ցանկանում եմ, որ պատվով կրեք նաև հայրենիքի պաշտպան դառնալու կոչումը և լինեք խաղաղ օրերի զինվոր:

«Վերջին դաս»-ի առթիվ սիրով շնորհավորում և դիմում եմ Սևան համայնքի հիմնական դպրոցներն ավարտող իններորդցիներին, որոնց համար ազդարարվում է մի նոր մեկնարկի սկիզբ: Ցանկանում եմ, որ այդ մեկնարկը լինի գիտելիքաառատ, իմաստավորված և խաղաղ պայմաններում:

Սիրով ու ակնածանքով ցանկանում եմ առանձնահատուկ դիմել մեր մանկավարժներին:

Հարգարժան մանկավարժներ,

Դուք հպարտացել ու ոգևորվել եք ձեր աշակերտների հաջողություններով ու ձեռքբերումներով, դարձել նրանց առաջին խորհրդատուն ու ընկերը, անցել նրանց հետ հետաքրքիր ճանապարհ, այդ ճանապարհին ներդրել եք ձեր ուժն ու եռանդը ու այսուհետ էլ հպարտանալու եք ձեր սաների հաջողություններով՝ շարունակելով ձեր առաքելությունը:

Հարգելի ծնողներ, օրը նաև ձերն է,

Կիսում եմ ձեր հուզմունքն ու հպարտությունը, միանում ձեր զավակներին ուղղված բարեմաղթանքներին:

Սիրելի շրջանավարտներ.

Առջևում քննություններն են՝ ձեր հասունության և իմացության փորձաշրջանը: Ես հավատում եմ, որ տերը կլինեք ձեր երազանքների ու դրանք կյանքի կկոչեք՝ դառնալով մեր համայնքի և մեր պետության արժանի քաղաքացիները:

Թող ձեր նորամուտը բարի լինի մեծ կյանք, որտեղ յուրաքանչյուրդ ամրագրելու եք ձեր տեղը ձեր գիտելիքների, իմացության, հաստատակամության և նպատակասլացության շնորհիվ: Ապագան ձերն է, այն ստեղծվելու է ձեր միջոցով ու ձեր շնորհիվ:

Իմ պատանի բարեկամներ,

Իմ, համայնքի ղեկավարի աշխատակազմի, բնակավայրերի վարչական ղեկավարների, համայնքի ավագանու անունից շնորհավորում եմ ձեզ, մաղթում բարձունքներ նվաճելու անսպառ եռանդ, կամք, նպատակասլացություն և վճռականություն, երջանկություն և անսպառ բարիք: «Վերջին դաս»-ի խորհուրդ-զանգ էլ թող ազդարարի լայնահուն ճանապարհի սկիզբը:

Սիրելի շրջանավարտներ,

Ցանկանում եմ ձեզ լուսավոր ապագա, հաջողություն ուսումնառության և աշխատանքային հետագա տարիների ընթացքում, ապրեք երիտասարդությանը հատուկ խանդավառությամբ՝ լի երազանքներով ու նպատակներով, զինվեք գիտելիքներով ու դարձեք մեր պետության ու երկրի արժանի քաղաքացիները:

Բարի ճանապարհ դեպի նոր կյանք, սիրելի շրջանավարտներ:

Ողջունում եմ ձեր նորամուտը մեծ կյանք: